70. ԴԼՈ, ԼԱՎԱՆԴՈ

Կէղի էրկու ախպեր, մեկ՝ Դլո, մեկ՝ Լաւանդո:

Դլոն կէլնի կարգյվի, ճիչ ախպերն ա:

Դլոն ան մեկ օր Լաւանդոյին կասա. - Էլի՛, էրթանքյ կալ մաղենքյ:

Լաւանդոն արտար ա:

Կալ կը մաղեն, Դլոն կը մաղա, Լաւանդոն կը լըցա: Քանի Լաւանդոն կը լըցա, Դլոն կը մաղա, կէլի գըլիւլ, խատ չէղիր:

Լաւանդոն կասա. - Ախպե՛ր, ես կը մաղիմ:

Էն օր կը մաղա, տառնա ցորեն: Խատըն կը պերեն տուն:

Դլոն կասա. - Ախպե՛ր, ես տ'էրթամ կարիբութեն: Իմ կին քյե թասլիմ:

Լաւանդոն շատ պիտվանական կէղի, ախպըրկընգան աչք կը մընա հինե:

Խոսք կը թալա ախպըրկին Լաւանդոյին: Լաւանդո խոսքով չէներ:

Էրկու տարի, իրեքյ կը մընա, ախպեր կը գա:

Կընիկ իրկան կասա. - Քիւ ախպեր ձի խոսք կը թալա:

Դլոն Լաւանդո կը կանչա, պերա:

Կասա. - Ախպե՛ր, ես իմ կընիկ տըվի քյե, քյե տըվի Աստըծուն, տիւ ընչի՞ ամլա կէնես: Իմ կին կասա՝ էնի ձի խոսք կը թալեր:

- Չէ՛, - կասա, - Դլո՛, էտի բեբախտութեն ա, ես մեղավոր չեմ: Ես կընիկ չեմ էներ, մընացեր իմ ազաբ:

Կասա. - Ախպե՛ր ջան, խալալ ա՛ ձի, ես կէրթամ:

Կէլնի, կէրթա: Կը խի, օր չոլ տաշտի մեջ իրեքյ մաքյի կա: Մաքյիքյ լըղար են: Ինգեր են կորընգնի ծաղկի մեջ, չեն կանա ուտի: էն էնու մոտեն կը խլա ծաղիկ, էն էնու մոտեն կը խլա:

Կէլի, կէրթա Լավանդոն: Կէրթա, տաշտի մեչ էրկու գիսկ կը խի: էն տաշտի մեչ էլմա կորընգնի ծաղիկ կա, էն կը տա էնոր, էն կը տա էնոր: Մեկ խընձ մեկ կլավն ա:

Լավանդո կասա. - էսի ի՞նչ պան ա:

Կէլնի, թոնա գա: Կը գա մըչ չոլ տաշտին, կը խի չորս կընիկ: էրկուս կը գյընդեն, էրկուս կը թըխեն: Թըխեն, չըթըխեն, խաց չըկա:

Կասա. - Մայրի՛կ, էտի ինչպե՞ս ա:

Կասա. - Ախպերի՛կ, էսի անեծք ա, օր թըխենքյ, չըթըխենքյ, խաց չըկա:

Լավանդոն կը թողնա, կը գա: Կը խի, օր գի մեչ չոլ տաշտին կովըմ կա, չոլախ ա:

Կովուն կը խառցընա. - էտի ի՞նչ պան ա:

Կով կասա. - էտի էն ա, օր ձի խապեցին, ասին՝ գյնա՛, էվի, Ադամու պըտուղ կե՛ր, ես կերա, մերկացա:

Կէլի, կը գա: Կը խի, օր մեկ գի ճուր կէնա բախչի մեչ:

Ճուր էրող ըզԼավանդո կը կանչա, կասա. - Արի՛ մըն ձի, վըր ձի մարթ էլ չըկանա վեր ընցի:

Լավանդո էկավ:

Ճուր էրող ճըրի ակ տեղ կա, կը քըչկըցուցա, տեղ կա, կը շատցուցա:

Ճուր էրող Լավանդոյին խառցուց, ասաց. - Տու դի՞ր կէրթաս:

Կասա. - Ձի զա չըկա, ես թողեր եմ, էկեր եմ, կէրթամ մըտ Ֆալագյ:

Ճուր էրող կասա. - Եսն եմ Ֆալագյ: Քու ցավն ի՞նչ էր, օր տու էլար, էկար:

Լավանդո կասա. - Նեղացա, էլա, էկա:

Կասա. - Ինչու՞ նեղցար, ես Ֆալագյն եմ, քու ցավն ի՞նչ կա, ձի կըսա՛ էրա:

- Իմ ցավ մեկ պան ա, իմ գյըլխուց ա, քյե կըսա չըմ էներ:

Ֆալագյ կէլնի, թուղթըմ կը գյրա:

Կասա. - Գյնա՛ ճիայե Խանմե: Էն սար հըմեն սուսուն ծաղիկ ու բեբուն ծաղիկ են: Չէրթա՛ս ճիայե Կանմե, էն տեղ դանրդ ա:

Լանվանդոն կէլնի, կէրթա: Կը սխալվի, կէրթա ճիայե Կանմե: Ընտեղ գել, պան են: Առչ են, ջանանվար են:

Կը տառնա, կը գա մըտ Ֆալագյ: Ծերացե՞ր, տեղընցեր, հանխու վանխեցեր ա:

Ֆալագյն ասաց. - Չէ՞ ես քյե ճամխեցի ճիայե Խանմե, տու հինչո՞ւ գացեր ճիայե Կանմե:

Էտ խոսքեր օր կը լըմըննա, Լանվանդոն կը մեռնի: Էտիկ շատ արտար կէղի:

Տու խասար քու մըրազին, էնի խասավ ուր մըրազին: